Յոյս մի շողայ գեղալոյս,
Ընդ բոլ ապոյ էր ծածկիս,
Արծաթափայլ ի յալիս.
Եւ դառնագէտ,
Կաս եւ հեծեաս ի լալիս.
Այլ օ՜ն, ի բաց, ի բա՜ց յինէն
Եւ արհամարք սեաւ մահուն,
Աջդ Հայրական կարկառեա՛ յիս,
Յայս Թախիծ։

Մա՛յր եւ դայեակ ազգի մարդկան տիրապիծ
Մասի՛ս, շնչեա՛ յիս զեփիւռ,
Զեփի՛ւռ քաղցրիկ, մուտ յիմ սի՛րտ,
— Հա՛ր զանգակիդ ձայն ուժգին,
Սրացիր ի Թիւ տրամագին.
Երկին միայն, եւ Աստուած,
Սրբէ զարտօսր բոյդ յաչաց,
Ո՛վ Զանգակ Մասեաց։

Ներկայ Վարժապետ
Մ. Հասան-Նէճատեանց
յԱխալցխայ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ
ՍՆԱՓԱՌԻ ԵՒ ՇԱՀԱՍԻՐԻ

Անափառն մարդկութեան ժանտախտ է. դիմացի մարդիկը իրեն համար կամ իրեն անկարդ կրից համար ստեղծուած լինիլ կ'կարծէ. ազգը կ'մատնէ, հասարակաց կ'վնասէ, և նոցա վնասով կ'ուզէ փառաւորուիլ։ Անափառն ժողովրդոց արեամբ մեծամեծ ապարաններ կշինէ, նոցա մէջ կ'փակուի, շողոքորթներով կ'շրջապատի, նոցա քծնող և և մարդերոյդ գովասանութիւններով կ'սիրտնայ։ Անափառն անմիտ կամ չարամիտ արբանեակներ կ'պահէ, նոցա մոլութեանց և խարդախութեանց աչք կ'գոցէ, նոցա առատ ոռճիկներ կուտայ, մեծագին հագուստներով կ'զարդարէ, մէկ խօսքով նոցա ստրուկ կ'դառնայ, որպէս զի նոցա կարկատուն բանի խօսքերով առժամանակ իւր մոլութիւններծածկէ, ամէնքի մէջ բարերանուի, բոլոր մարդկութեան օգուտը և պատիւ կ'ոտնհարէ՝ միայն իւր փառաւորութեան հետամուտ կ'լինի։ Անափառն իրրև նախանձոտ ուրիշներու բարեաց վերայ կ'մաշի, նոցա հանճարը և ճարտարութիւն նսեմացնելու կ'աշխատի, եթէ հնար լինի, արեգական կ'հրամայէ միայն իւր վերայ ծագել։ Կ'մեռնի եթէ իւր պաշտօնակցաց մէջ իրմէ հանճարով կամ գործունէութեամբ գերազանց մէկը տեսնէ, այլ որպէս զի ինքն չարհամարհուի, կը հրամայէ միշտ և չինդրէ, միշտ ստորներ կուզէ ունենալ իրեն պաշտօնակից՝ այս ողորմելիներին ծածուկ իրենց առաջ կ'գովէ՝ կ'բարձրացնէ, իսկ հասարակութեան մէջ ճանճ մը կ'երևցնէ կամ. անամօթաբար վրաներ կ'ինդայ, որպէս զի միայն ինքն փառաւորուի։ Անափառն որ և իցէ բարեգործական ընկերութեանց մէջ բանի կ'երթայ կ'խառնուի, ոչ թէ բարեմտութեամբ նոցա գործոց մասնակցելու, այլ կամ իշամեղուի պէս օտարի վաստակ իրեն սեպհականելու, կամ յաչս ոամկաց փառաւորուելու, և կամ թէ բարերարելոց վերայ ժամանակին պարծանք մը ունենալու. եթէ այս մեր սիրամարդ ձևացած ագռաւն չընդունվի կամ խայտառակութեամբ դուրս ձգուի, էլ կեղտ չի մնար, որովք կ'սկսի արատաւորել ընկերութեան գովելի ձեռնարկութիւնները։ Շահասէրն փոքրիկ շահու համար բաղմամեայ բարեկամութիւն կ'ծախէ, սուտ խօսիլ ամօթ չի համարեր, իրեն խոստման կ'դրժէ, իւր երդմունքը ոտքի տակ կառնէ։ Շահասէրն ժամ մը յառաջ պաշտպանած անձը կամ գործը կ'պախարակէ և կ'արհամարհէ, ընդ հակառակն պախարակեալն կ'պաշտպանէ, ըստ հասարակաց առածին "կշնորհին որ կողմն ծանր գայ, այն կողմը կ'վազէ". ամենայն ցած խնդիրը յանձն կառնու, մինչև անգամ իւր տուած ստորագրութիւնն կ'լիզէ։ Շահասէրն յաջողութեան ժամանակ բարեկամին կ'մոռնայ, սեղանակից կ'լինի, շողոքորթութիւններ կ'անէ, բայց երբոր խեղճ բարեկամ թշուառութեան հանդիպի, կ'ձգէ նորանից կ'հեռանայ, խսպառ հայեցուած մը ցոյց չ'իտար, իրրև թէ բոլորովին հետ տեսնուած չէ. կ'նմանի ստուերին որ արեգական ճառագայթից ժամանակ կերևի, իսկ ամպամած օրերը կ'կորչի։ Շահասէրն սիրելոյն թշուառութեան վերայ կ'ուրախանայ

Նորա անձնական պակասութիւնները կ'հրատարակէ, կատարելութիւնները կ'ուրանայ. Նորա համար գաղտնի մեքենաներ կ'լարէ, դաւաճանութիւններ կ'նիւթէ, 'ի մահ կ'վիրաւորէ. քսութեամբ եղբայր եղբօր, բարեկամ բարեկամի հետ կռուի կ'ձգէ. Նոցա մէջ յաւիտենական անհաշտ ատելութիւն կ'մտցնէ. Շահասէրն իրրև ապերախտ՝ շարեաց հատուցումներով իւր բարերարին դէմ կ'յարձակի, Նորա սիրտը կ'խոցէ, Նորա բարերար ձեռքերը կ'կաշկանդէ, կ'յուսահատեցնէ ուրիշ կարօտելոց ևս զայն տարածելու։ Փառամոլն և շահասէրն Ազգասիրութեան ակնահաճոյ քօղշն տակ կ'ծածկուին. հայրենասիրական դիմակ իրենց երեսի վերայ կ'առնուն. Ազգին ցաւակից կ'հանդիսանան, կարծես թէ իրենց աղիքներ սորա վերայ կ'գալարին, ամեն ընկերութեանց մէջ "Ազգ և Հայրենիք" սրբազան բառեր կ'յեղյեղեն, մինչև որ և իցէ ազգային պաշտօնի մէջ մտնեն, այնուհետև դիմակ կ'մերկանան, իրենց խարդախութիւններ յայտնապէս կ'պաշտեն։ Շահասէրն դպրոցներու վերայ կը բռնանայ, Նորա եկամուտներ ըստ ախորժանաց կ'վայելէ, արժանաւոր ուսուցչաց ոռճիկ կ'յետաձգէ, և կամ սոցա պաշտօնից արձակելով, այս սրբազան գործոյն անյարմար իրեն ազգականներ, մերձաւորներ և կամ իրեն կրից քծնող լրբենի կամ անառակ կամ տգէտ շողոքորթները ուսուցիչ կ'կարգէ, որով լուսակարօտ աշակերտեալք ուսմունքէ կ'զրկէ կամ բարոյականութիւնին կը խանգարէ. Շահասէրն եկեղեցւոյ վերայ ևս կ'բռնանայ, Նորա արդիւնքները իւր օգտին կ'գործածէ, աւելորդ շինութեանց կ'ձեռնարկէ, որպէս զի փող շահուի. Ազգին որ և իցէ բարենպատակ գործոյն կամ շինութեան կընդդիմանայ փող հատուցանել, կարծես եկեղեցին իւր սեպհական ժառանգութիւն կամ կալուած լինի, ժամանակին հաշուատուութենէն կփախչի, իւր ազահութիւնը բարեպաշտութեամբ կ'ծածկէ. "գիշեր ցորեկ յԱստուծոյ խնդրած եմ որ զիս այս պաշտօնէս հեռի պահէ" ասելով՝ ռամիկները կ'խաբէ. կարծես թէ ուզէ չէ կարող հրաժարուիլ։ Եկեղեցւոյ վերայ աղդեցութիւն ունեցող մարդիկ ճաշի կ'հրաւիրէ, Նոցա առաջ իրրև օգտամատոյց կ'պարծի, Նոցա սիրտը կ'գրաւէ, 'ի զուր թող աղաղակեն ժողովուրդ, Նա իւր պաշտօնի մէջ հաստատուն կ'մնայ, Շահասէրն եթէ որ և իցէ ատենից մէջ պաշտօնատար լինի, անմիտ փառասիրութեամբ հանգերձ՝ շատերու իրաւանց կդիպչի. իւր օգտի համար ճշմարտութիւն կ'ծածկէ. ստութեան պաշտպան կ'հանդիսանայ, որ և իցէ գանգատաւորի մը, որ իրեն գալու լինի, նախքան յերեսն, ձեռքը կ'նայէ, եթէ դատարկաձեռն է, խեղճը գործ չ'ունի, թող երթայ գայ՝ թախանձէ, իրեն համար շահաւէտթէ և մոլի մարդիկը կ'պատուէ՝ կ'գովաբանէ. ընդհակառակն իրեն համար ապարդիւնները թէ և առաքինի. ոչ միայն կ'վատահամբաւէ, այլ և կ'աշխատի ընդ դէմ արդարութեան Նոցա չարիք հատուցանել. միշտ իւր պաշտօնից կ'տրտնջայ. իրեն հարցնես չ'մ'ուզեր ծառայել կ'ասէ, բայց սուտ է. եթէ արձակեն, նոյն ատենի յետին ծառայութիւնը անգամ յանձն կ'առնու, միայն թէ ատենական գործոց միջամտութենէն և հետևաբար իւր շահէն չ'զրկուի։ Այսպիսի անհաւատարիմ պաշտօնէից խարդախութեամբ եկեղեցական և հասարակաց ատեան մը բարեաց սպանդարան կ'դառնայ. Փառամոլն և շահասէրն խաղալիկ բարեգործութեամբ առժամանակ ժողովուրդ կ'դարմանեն, Նոցա իրաւանց ջերմ պաշտպան և ջատագով կ'հանդիսանան, մինչև որ Նոցա վստահութիւնն դրաւեն. այնուհետև յամենայն զօրութենէ Նոցա վերայ կ'յարձակեն. Նոցա կրկեղեքեն և կ'հարստահարեն, Նոցա մտաւոր և նիւթական յառաջադիմութեան անիւը խորտակելով յետախաղաց դրութեան խորխորատ կ'ձգեն,

Այլև ի՞նչ թուեմ. մատեաններու և մատենագրաց խորամուխ հանճարոյն կարօտ է բովանդակապէս՝ յայտնել աշխարհին այս սոսկալի սկզբնական ախտից և Նոցա ենթակայ և գործիք եղողներուն անբան չարիքները. ես բաւական կը համարիմ այսչափս 'ի զգուշութիւն հասարակաց,

Ա՞ղ-ի Պլ-ղեան

ի Տէրէ-